Looking ahead to 2026, the prime minister pointed to major international events to be hosted in Yerevan, including the European Political Community Summit and COP-17 on Biodiversity. He also highlighted the upcoming parliamentary elections in June 2026, calling on citizens to defend peace, democracy, and statehood through free and fair elections

Concluding his message, Pashinyan said Armenia has “reached the future and lives in it,” expressing confidence that 2026 will be a year of unity, consolidation, and continued peace.

Aliyev Tells U.S. Delegation

Continued from page 1

agenda.

Noting that trade relations between Azerbaijan and Armenia have already been established, Aliyev underscored the importance of exporting

Azerbaijani petroleum products to Armenia, as well as supplying wheat from Kazakhstan and Russia to Armenia via Azerbaijan. He also expressed hope that the TRIPP corridor will create new opportunities for regional connectivity.

Haigazian University Board of Trustees Unveils Exquisite 70th Anniversary Gala Celebrating a Global Legacy

LOS ANGELES — The Board of Trustees of Haigazian University is delighted to announce the highly anticipated 70th Anniversary Gala, an evening of elegance and celebration that will unfold in Los Angeles, marking a monumental milestone in the University’s storied history. This glittering event, aptly titled From Beirut to Hollywood, will bring together an illustrious gathering of alumni, benefactors, partners, and distinguished guests from around the world to commemorate seven decades of unparalleled academic excellence, transformative leadership, and unwavering commitment to service.

This historic gala promises to be a tribute to Haigazian University’s legacy, reflecting on its remarkable journey since its founding while honoring the institution’s enduring mission to educate, inspire, and lead across generations and continents.

As part of this milestone evening, the University will proudly honor Joyce Philibosian Stein, the beloved Lifetime Trustee and steadfast advocate of Haigazian University. For decades, Joyce and her family have been pillars of support, deeply invested in the University’s strength, growth, and continued success. Her exceptional dedication will be honored as part of the evening’s festivities.

Co-chairing the Gala Committee are Tina Segel and Raffi Kendirjian, both esteemed members of the Board of Trustees. With their impeccable taste and unwavering commitment, they are curating an unforgettable night that will combine glamour, tradition, and celebration into a spectacular showcase of Haigazian University’s 70-year legacy.

The soirée will feature an exclusive guest list, including Rev.



Dr. Paul Haidostian, the esteemed President of Haigazian University, and several prominent Board of Trustees members traveling from both Beirut and throughout the United States. Dignitaries, alumni, and distinguished individuals from across the East and West Coasts of the United States will converge for an evening that promises to be nothing short of spectacular.

As the evening unfolds, guests will be treated to a sensational musical performance by world-renowned Armenian jazz virtuoso Vahagn Hayrapetyan from Armenia and his exceptional band, for this once-in-a-lifetime occasion. Their captivating performance will add an enchanting and culturally rich dimension to the gala, perfectly complementing the evening’s grandeur.

Additional details regarding the evening’s opulent program and exquisite highlights will be revealed in the coming weeks. This promises to be an unforgettable celebration of Haigazian University’s enduring legacy—one that will continue to inspire generations to come.

For reservations and donations go to: <https://tinyurl.com/HU-Labanquet>

Society for Armenian Studies Elects 2026 Executive Council Officers Barlow Der Mugrdechian Elected President



The Society for Armenian Studies (SAS) held its Annual Membership Meeting on Saturday, November 15, followed by an Executive Council meeting on Saturday, December 13, 2025. The Executive Council elected new officers for the upcoming year: President, Barlow Der Mugrdechian (Berberian Coordinator of the Armenian Studies Program, Fresno State); Vice-President, Asya Darbinyan (Executive Director of Chhange [Center for Holocaust, Human Rights & Genocide Education] at Brookdale Community College, New Jersey); Treasurer, Talar Chahinian (Program for Armenian Studies, University of California, Irvine); Secretary, David Zakarian (Berberian Professor of Armenian Studies, Fresno State); and advisors, Victoria Abrahamyan (Postdoctoral Research Fellow at the University of Geneva); Melanie Tanielian (Associate Professor of History, University of Michigan, Ann Arbor), and Bedros Torosian (UC Chancellor’s Postdoctoral Fellow at UC Davis [History Department]).

Journal of the Society for Armenian Studies co-editors Houri Berberian (Meghrouni Family Presidential Chair in Armenian Studies and Director of the Center for Armenian Studies, University of California, Irvine) and Talinn Grigor (Professor of Art and Architectural History, University of California, Davis) will continue to serve as ex-officio officers of the SAS Executive Council.

“I am looking forward to my upcoming year as President of the Society for Armenian Studies and I look forward to working both with the continuing and new officers,” said Der Mugrdechian. “SAS plays a vital role in the field of Armenian Studies. Our members around the world are devoted to the study of Armenia and the Armenian people. This research, shared with the academic community and the public, helps raise awareness about Armenian culture.”

Der Mugrdechian thanked 2025 outgoing Executive Council members Elyse Semerdjian, Armen Marsoobian, and Helen Makhdoomian for their dedication and service to SAS.

Under Der Mugrdechian’s leadership, SAS will continue its commitment to the development of Armenian Studies and to working with scholars and organizations across the globe.

The Society for Armenian Studies (SAS) celebrated its 50th anniversary in 2024. Founded in 1974, the SAS is an international body, composed of scholars and students, whose aims are to promote the study of Armenian culture and society.

The SAS website, societyforarmenianstudies.com, provides information about events and activities. Readers who wish to financially support the SAS can become a member. The secretariat of the SAS is based in the Armenian Studies Program at California State University, Fresno.

AAF Delivered \$41 Million of Medicines to Armenia and \$4 Million to Lebanon in 2025

GLENDAL — During the calendar year of 2025, the Armenia Artsakh Fund (AAF) donated a total of \$45 million worth of various types of life-saving medicines to Armenia (\$41 million) and Lebanon (\$4 million).

These medicines and medical supplies were sent by sea and air on 30 separate shipments throughout 2025.

“We highly appreciate the valuable medicines donated by several major American corporations and charities that are longtime partners of the Armenia Artsakh Fund,” stated Harut Sassounian, President of AAF.

In the past 36 years, including the shipments under its predecessor (the United Armenian Fund), the AAF has delivered to Armenia and Artsakh a grand total of \$1.1 billion worth of humanitarian aid on



board 168 shipments by air and 2,624 by sea.

“The Armenia Artsakh Fund is regularly offered, free of charge, millions of dollars in life-saving medicines and medical supplies. We would appreciate your generous donations to the AAF so that we can continue delivering this valuable assistance to all medical centers in Armenia,” stated Sassounian. “All contributions to the AAF charitable organization are tax-deductible.”

For more information, contact the AAF at: sassoun@pacbell.net.

Armenia Ranks 13th Among the World

Continued from page 1

- 10. São Tomé and Príncipe (Africa) – 92.13
- 11. United Arab Emirates (Middle East) – 92.12
- 12. Kiribati (Oceania) – 91.96
- 13. Armenia (Europe) – 90.27

- 14. Oman (Middle East) – 89.15
- 15. Bahrain (Middle East) – 86.84
- 16. Grenada (Caribbean) – 86.47
- 17. Singapore (Asia) – 86.07
- 18. Saint Kitts and Nevis (Caribbean) – 85.64
- 19. Slovenia (Europe) – 84.78
- 20. Croatia (Europe) – 84.43

Խաւարի Մէջ Լոյս.

Սուրբ Ծննդեան Տօնը Արցախի Հայաթափման Եւ Քրիստոնեայ Աշխարհի Անտարբերութեան Դիմաց

ԴՈԿՏ. ԱԲԷԼ ՔՅՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Քրիստոնէական ընկալումով՝ Ս. Ծնունդը յոյսի, սիրոյ, խաղաղութեան եւ մարդկութեան հանդէպ Աստուծոյ անընդմիջելի մերձակայութեան տօնն է։ Աւետարանի այս պատգամը, սակայն, բազմիցս կտրուկ կը հակադրուի պատմական եղելութիւններուն, պետութիւններու որդեգրած քաղաքական իրականութեան ու անկէ թելադրուած դիւանագիտական գործողութիւններուն։ Այս հակասութիւնը յատկապէս ակնյայտ կը դառնայ այն պարագային, երբ քրիստոնէական կրօնին ու մշակոյթին պատկանող ազգեր ուղղակի կը դառնան բռնութեան, տեղահանութեան, իրաւազրկութեան, ընդհուպ մինչեւ իսկ ցեղասպանութեան զոհ, երբ միաժամանակ դիտումնաւոր կը լքուին նոյն հաւատքը դաւանող՝ այսպէս կոչուած քրիստոնեայ ազգերու եւ պետութիւններու կողմէ։ Այս փաստը առաւել եւս հիասթափութիւն կը պատճառէ, երբ անոնք ունին բոլոր հնարաւորութիւնները օժանդակելու իրենց հաւատակից քոյրերուն ու եղբայրներուն՝ առնուազն կանխարգիլելու անոնց սպառնացող օրհասական վտանգը։

Արցախի հանրապետութեան շուրջ տեղի ունեցած իրադարձութիւնները լուրջ հարցադրումի կ'ենթարկեն համատես աւետարաններուն հաղորդած սուրբծննդեան ուղերձը։ Ժողովուրդ մը, որ մասմետականներով զերակշռուած աշխարհագրական միջավայրի մը մէջ դարեր շարունակ բարձր պահած է քրիստոնէական հաւատքին ջահը, կառուցած է վանքեր ու եկեղեցիներ, մշակած եւ զարգացուցած է քրիստոնէական մշակոյթի մասին վկայող եզակի արժէքներ, կարճատեւ ժամանակամիջոցի մը ընթացքին գրկուեցաւ իր հազարամեակներու օրրանէն՝ դառնալով վտարանդի եւ հայրենագուրկ։ Քաղաքական եւ ռազմական պարտութիւնը յանգեցուց ոչ միայն տարածքային կորուստի, այլեւ Արցախի պետական այրերու բանտարկութեան, մշակութային ժառանգութեան ոչնչացման եւ ամբողջ բնակչութեան պարտադիր արտագաղթին։ Այն փաստը, որ այս իրավիճակը մեծաւ մասամբ հեշտութեամբ ընդունուեցաւ աշխարհի բրիտանեայ համարուող պետութիւններու կողմէ, կը յառաջացնէ աստուածաբանական լուրջ հարց մը. ի՞նչ հաւաստիութիւն ունի այսօր Աւետարանի սուրբ ծննդեան պատգամը, երբ գայն կրողները կը պահպանեն դաւաճան լուութիւն մը, այլապէս հանդէս կու գան ընդամէնը դատարկ լոզունգներով կամ կը նահանջեն վճռորոշ պահերուն, երբ իրենց հաւատակից քոյրերն ու եղբայրները Քրիստոսի սիրոյն կը նահատակուին, կը կորսնցնեն քրիստոնէական հաւատքի վկայութիւններով կնքուած ամբողջ տարածաշրջան մը՝ տեղի տալով մասմետականութեան հեղեղին։

Գուցէ կարելի է առարկել, թէ հարցը ամենեւին չունի կրօնական բնոյթ, այլ տեղի ունեցած ամբողջողբերգութիւնը կը կրէ բիրտ քաղաքականութեան մը օրակարգը։ Սակայն, միեւնոյն է, խորապատկերը ունի նաեւ կրօնական կնիք՝

նկատի ունենալով այն փաստը, որ տարածաշրջանը անուանափոխուելով այսօր նուաճող պետութիւնը գայն կը կոչէ Qarabag iqtisadi rayonu, որ իր մէջ կը ներառէ Agcab?di, Agdam, Agd?r?, B?rd?, F?zuli, Xocali, Xocav?nd, Susa v? T?rt?r inzibati rayonlari, h?m?zinin Xank?ndi s?h?ri քաղաքներն ու շրջանները։ Տարակոյսէ վեր է, որ այս ամբողջ տարածաշրջանը հետզհետէ պիտի վերաբնակեցուի թուրքագերի կամ ընդհանրապէս մահմետական ազգաբնակչութեամբ, որ կը նշանաւորուի մահիկով եւ ոչ թէ խաչի խորհրդանշանով։ Արդեօք սոցնը կորուստ մը չէ քրիստոնեայ աշխարհին համար։ Սակայն ի՞նչ փոյթ, վաղուց արդէն վկայուած իրողութիւն է, որ պետութիւններ կ'առաջնորդուին իրենց գերագոյն շահերէն եւ ոչ թէ հաւատքի այն զգացողութենէն, զոր կը թելադրէ Աւետարանը։ Սուրբ ծննդեան տօնը, որ կը միաւորէ ամբողջ քրիստոնեայ աշխարհը Բեթղեհէմի մսուրի խորհուրդին շուրջ, տեղ մը կը դառնայ անհասկնալի, միանգամայն ձեւական եւ նոյնիսկ անընդունելի, երբ նոյն հաւատակից ազգերու եւ պետութիւններու միջեւ կը պակսին սէրն ու միութիւնը, իսկ վճռորոշ պահերուն՝ նաեւ զօրակցութիւնը։

Այսօր ի՞նչ սրտով պիտի տօնէ արցախցի հայը Քրիստոսի սուրբ ծննդեան տօնը, երբ ան դարձած է փաստօրէն հայրենագուրկ եւ վտարանդի իր պապենական հողերէն, հեռու՝ իր պատմական սրբավայրերէն, անցեալին կաթողիկոսութիւն դարձած Գանձասարէն, Դադիվանքէն, Ամարասէն, Շուշիի Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց տաճարէն ու հայոց այն բազմաթիւ սրբավայրերէն, որոնց ապագան անորոշ է եւ ենթակայ հետզհետէ թշնամիին բարբարոս ձեռքերով իրագործուող ոչնչացումին։ Նշուած սրբավայրերը դարեր շարունակ եղած են ոչ միայն մշակութային կամ կրօնական կեդրոններ, այլեւ հաւաքական յիշողութեան եւ հոգեւոր ինքնութեան կրողներ։

Եթէ իրաւ է տառապանքը, ապա անոր ամենածանր դրսեւորումներէն մէկն ալ ոչ թէ տունն ու տեղը, սեփական ազգին կորսնցնելն է, այլ գրկուիլը սգալու իրաւունքէն՝ ստիպողաբար լքել իր ընտանիքի սիրելի անդամներուն եւ հարազատներուն զերեզմանները, այցելել չկարենալ արցունք թափելու անոնց շիրիմներուն վրայ, թէկուզ վառելիւ մօմ մը կամ խունք ծխելու անոնց հոգիի խաղաղութեան եւ լուսաւորութեան համար։ Եւ սոցնը տակաւին առաւել եւս ծանր է, երբ արցախցի հայը ակամայ դարձած է անձնատուր՝ դատապարտուած ըլլալով առ այժմ ընելու ոչինչ, այլ յանձնուելու ունայնութեան, իրավիճակ, որ թերեւս հոգեկան շատ աւելի խոր տանջանք է, քան սեփական ունեցուածքին կորուստը։

Վերոնշեալ սրբավայրերէն ստիպողական բաժանումը հոգիին վրայ չսպիւրացող վէրք մըն է։ Քանզի հայ մարդու ընկալած քրիստոնէութեան մէջ հաւատքը անբաժանելիօրէն կապուած է պաշտամունքային որոշակի վայրերու հետ, ուր կը միահիւսուին աւանդութիւնները, հոգեւոր եկեղեցական արարո-

ղութիւնները, պաշտամունքը, սուրբ պատարագը, պատմութիւնն ու յիշողութիւնը։ Հետեւաբար, հոգեւորմշակութային այս ժառանգութեան սպառնալիքին տակ գտնուելու, պղծուելու եւ ոչնչացման ենթարկուելու վերաբերեալ իրազեկուածութիւնը ոչ միայն մշակութային, այլեւ ինքնին կը ներկայացնէ աստուածաբանական խնդիր։ Արդարեւ, աստուածարդարացում (Theodice) մը, որ կը վերաբերի աստուածաբանական այն փորձին՝ արդարացնելու համար բարի եւ ամենակարող Աստուծոյ նկատմամբ հաւատքը՝ աշխարհի մէջ տիրող տառապանքին, չարիքին եւ անարդարութեան հանդէպ։ Ինչո՞ւ արդարը կը տառապի այս աշխարհի մէջ, երբ Աստուած արարիչն է բարիին՝ ողորմած է ու արդար։ Սուրբգրային աւանդոյթը կը հրաժարի պարզ պատասխաններ առաջարկել այս հիմնարար հարցումին եւ չի լուծեր առկա խնդիրը։ Աստուածաշունչ մատեանը, բնականաբար, արդարին տառապանքը չի ներկայացներ իբրեւ Աստուծոյ ողորմածութեան հակափաստարկ, այլ կը մատնանշէ աշխարհ մը, ուր զերազանցապէս առկայ են ու կը գործեն ազատութիւնը, մեղքը եւ բռնութիւնը, եւ ուր Տիրոջ խոստացած արդարադատութիւնը լիովին ակնյայտ կը դառնայ միայն իր վախճանաբանական իրականացումին մէջ։ Սոցնը, անշուշտ, կը հանդիսանայ միաժամանակ հաւատքին ուղղուած լուրջ մարտահրաւէր մը, թէ ինչպէ՞ս կարելի է ընկալել Աստուծոյ մերձակայութիւնը, երբ Անոր անմիջական ներկայութեան տեսանելի նշանները ոչնչացած կամ ստոյգ ոչնչացուելու սպառնալիքի տակ կը գտնուին։

Այստեղ կրկին հարց պէտք է տալ. թէ ի՞նչ կենսունակութիւն կրնայ ունենալ հաւատքը, ի՞նչն է սուրբ ծննդեան պատգամը, երբ քրիստոնեայ պետութիւններ կը ձախողին, կը բացակայի արդարութիւնը, իսկ անոնց ուժային քաղաքական շահերը դուրս կը մղեն միջազգային իրաւունքի բոլոր սկզբունքները։

Այս հարցը բնականաբար տեսական հետաքննութիւն մը չէ, այլ գոյաբանական փորձառութիւն։ Ան կը յառաջանայ այն պարագային, երբ մարդիկ փատօրէն կը գիտակցին, թէ Քրիստոսի անունը չի պաշտպաներ գիրենք եւ քրիստոնէական պատկանելիութիւնը արդարութիւնը չ'երաշխաւորեր։ Արդարեւ, այս լարուածութիւնը յատկապէս զգալի կը դառնայ սուրբ ծննդեան տօնին, որովհետեւ ան կը բացայայտէ մարդկութեան նկատմամբ Աստուծոյ փրկարար մերձակայութիւնը՝ աւետելով. «Բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք, խաղաղութիւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն» (Ղուկ. Բ, 14)։ Արդեօք սոցնը անկատար խոստում մըն է, թէ չաւտենապէս սպասողական վիճակ։ Սակայն Մարդեղութեան խորհուրդին աւետած այս պատգամը աշխարհի սկիզբէն ի վեր ուղղակի կը հակադրուի տիրող բռնութեան, ձախողութեան եւ անարդարութեան իրականաւորութեան հետ, որ առաւել եւս տեսանելի կը դարձնէ աստուածային տնօրինումին եւ մարդկային

արարքներուն միջեւ առկայ անշրպետը։

Այնուհանդերձ, Նոր կտակաւորանը չի խուսափիր պատասխանել այս հարցին։ Ընդհակառակը՝ գայն ուղղակի կը դնէ քրիստոնէական պատմութեան սկիզբը։ Սուրբ Ծնունդը յաղթողներուն տօնը չէ, այլ՝ հիասթափածներուն, տեղահանուածներուն եւ անգօրներուն։ Սուրբ ծննդեան աւետիսը առաջին հերթին աղքատներուն կ'ուղղուի եւ զանոնք մխիթարելու կու գայ։ Քաղաքէն դուրս, մարդոց հիւրընկալութենէն մերժուած՝ գոմի վերածուած ալը մը, իր կիսամութին մէջ կը դիմաւորէ լոյսին Արարիչը։ Աղքատիկ մայր մը, որ խանձարուով կը փաթթէ իր նորածինը եւ գայն կը դնէ յարդէ խշտիքի՝ մսուրի մը տրտում խոնարհութեան մէջ։ Մարդուն հանդէպ խանդաղատանքը խեղճութիւնն է, որ կը նուիրագործուի, եւ ոչ թէ իշխողներուն ու բռնաւորներուն փառքը, հարուստին պալատն ու ապարանքը, ոսկին ու արծաթը։ Յիսուսի ծնունդը որեւէ քաղաքական իշխանութեան պաշտպանութեան տակ չի կատարուիր, այլ՝ աշխարհի պատմութեան անշուք մէկ ծայրամասին մէջ։ Արդէն սուրբ ծննդեան նախընթաց պարագաները եւս զուրկ են բարեբաստիկ ըլլալու բոլոր կարելիութիւններէն, որովհետեւ հռոմէացիներէ պարտադրուած մարդահամարին բերումով Յիսուսի ծնողքը հեռու են իրենց բնակավայր Նազարէթ գիւղաւանէն, ուր կարելի ըլլար թէկուզ ընտանեկան օձախին մէջ լսել նորածին մանկան առաջին ձիչը։ Բայց ադպէս չեղաւ, ո'չ հարազատներէ, ո'չ մանկաբարձի մը կամ դուռդրացիներու օժանդակող ներկայութենէ, այլ անասուններով շրջապատուած՝ տեսակ մը օտարութեան եւ լքուած պայմաններու մէջ կ'իրականանայ Աստուածորդւոյն ծնունդը։ Աղքատներն են Յիսուս մանկան առաջին այցելուները՝ բաց երկինքի տակ իրենց հօտերուն պահպանութիւնը ընող հովիւներ, որոնք կու քան գուրգուրանքով խոնարհելու Փրկիչ մանուկին առջեւ։ Ապա, այս խեղճերէն ետք, իմաստուններն ու մեծերն են, որ պիտի գան՝ Արեւելքի մոզքերը՝ սրտաբուխ տալու իրենց նուէրները եւ ծնրադրելու աստուածային մարմնացած սիրոյն առջեւ։

Պատմական իրադարձութեան այս խորապատկերին վրայ՝ ուղղակի ապշեցուցիչ է կրօնական վերնախաւին լուութիւնը։ Քահանաները, օրէնքի ուսուցիչները, դպիրներն ու փարիսեցիները, որոնք քաջ գիտէին մարգարէութիւնները խոստացուած մեսիային մասին, միեւնոյն է, կը պահպանեն քար լուութիւն մը։ Նոյնքան զարմանալի է քաղաքական հեղինակութիւններու ցուցաբերած արհամարհոտ վարքագիծը, մարդիկ, որոնց համար մարդկային կեանքը հետաքրքրական է միայն այն պարագաներուն, երբ գայն կարելի է ծառայեցնել իրենց իշխանութեան կայունացման եւ քաղաքական առաւելութիւններուն։ Ահաւասիկ այս պայմաններուն մէջ կը ծնի Յիսուս։ Ոչ թէ որպէս գործող համակարգի մը

Պոլսահայ Տաղանդաւոր Բանաստեօ Վարդերես Գարակէօգեանի Անմեռ Յիշատակին

ՅԱԿՈԲ ՏԻՒՆԵԱՅԵԱՆ

2012-ի վախճանէն առաջ՝ 31 Դեկտեմբերին, Լոս Անճելըսի մէջ անժամանակ մահով կեանքին հրաժեշտ կու տար պոլսահայ տաղանդաւոր գրող եւ բազմաթիւ գիրքերու հեղինակ Վարդերես Գարակէօգեանը (Պոլիս, 18 Օգոստոս 1939 – Լոս Անճելըս, Գալիֆոռնիա, 31 Դեկտեմբեր 2012), երբ դեռ ունէր տալիք մեր գրականութեան:

Բանաստեղծ, խմբագիր, մանկագիր, արուեստի սիրահար ու անոր անսակարկ նուիրեալը, որ ասուպի նման յայտնուեցաւ պոլսահայ գրականութեան երկնակամարին, ապրեցաւ քիչ մը աստանդական, գաղթական կեանք՝ երկրէ երկիր տեղափոխուելով եւ մեզի թողեց գրական երկեր ու գրական ինքնատիպ դրոշմ՝ որպէս հրապարակագիր ալ, յետոյ անաղմուկ մեկնեցաւ, շրջապատի որոշ մարդոց ցուցաբերած վերաբերմունքէն ու անոնց անտեսումէն քիչ-շատ դժգոհ, ինչ փոյթ, որ իր շուրջի բացասական երեւոյթները մղեցին սեքսստացի ընտանիքի զաւակ Վարդերես Գարակէօգեանը, որ իր ուժերը լարէ դէպի գրականութիւն՝ յորձանքին ու բովին մէջ գրապաշարի: Անկախ այս բոլորէն, ան վայելեց ժողովրդականութիւն ու սիրուեցաւ գրական զանազան շրջանակներէ:

Յաճախելէ ետք Պօղոսեան-Վառվարեան վարժարանը՝ Գարակէօգեան կ'անցնի Պոլսոյ Կեդրոնական վարժարանը, ուր կ'ընդարձակուի իր մտածողութեան դաշտը եւ կը հիմնաւորուին այն գիտելիքները, որոնք յետագային ատաղձը պիտի կազմէին իր գրական անդրանիկ բոմբիւններուն: Կեդրոնականէն ներս ան կ'աշակերտէ հայերէն լեզուի ուսուցիչ, պոլսահայ ծանօթ գրող եւ արձակագիր, գիրքերու հեղինակ Տօքթ. Վարդան Կոմիկեանին՝ ամուսինը պոլսահայ համբաւաւոր եւ սիրուած ասմունքող, «Մարմարա» օրաթերթի խմբագրապետ Ռոպէր Հատտէճեանի կողմ «Ասմունքի իշխանուհի» տիտղոսին արժանացած եւ Ուսուցչաց Հիմնարկի մանկապատանեկան «Ժպիտ» պարբերաթերթի ժրջան խմբագիրներէն Սիլվա Կոմիկեանի: Նոյն վարժարանէն ներս Վարդերես Գարակէօգեան իրեն ուսուցիչներ ունեցած է մասնաւորապէս Հրանդ Անդրէասեանը՝ գրաբարի, հայր Ներսէս Սէթեանը՝ մատենագրութեան: Պոլսոյ Կեդրոնականէն շրջանաւարտ կ'ըլլայ 1958-ին:

Վերոյիշեալ երեք դաստիարակներուն շունչին ներքոյ հայերէնագիտութեամբ զինուած ու հայերէնի իմացութեան բաւական պաշար ամբարած Վարդերես Գարակէօգեանի հոգիին մէջ երկու տարի ետք պիտի պայթէին գրական բողբոջներ, որոնք իբրեւ առաջին արձագանգ ու երախայրիք՝ պիտի տպուէին «Մարմարա» օրաթերթին մէջ, երբ ան հազիւ 20-21 տարեկան երիտասարդ մըն էր: Կը ներկայացնէր Գարակէօգեանի ութ տողոց այդ բանաստեղծութիւնը՝ «Ծովի Նման» խորագիրով:

Անգոյն ես ծովի նման,
Գոյն ես փոխի դարերով,
Արքաներու թագերու շուկաներէն յամրընթաց
Անցեր ես գառի նման:



Անգոյն ես, հօգ, խրոխտ,
Մեծ վանքի քարի նման:
Աղէկ ու գէշ նորմ ալ կ'անցնի,
Կը մնա՛ս ծովի նման:

Պոլսահայ «Սան» եւ աւելի ուշ «Ճառագայթ» պարբերաթերթերուն բերած խրախուսանքն ու իբրեւ գրական բեմեր՝ 40-ականներէն անոնց մէջ իրենց գրական տաղանդը արտացոլացնող գրողներուն՝ Կարպիս Ճանճիկեանին, Զահրատին, Ռոպէր Հատտէճեանին, Զարեհ Խրախունիին, Գեղամ Սեւանին, Վարուժան Աճեմեանին եւ շատ ուրիշներու, այսպէս, յետագային պիտի միանար Վարդերես Գարակէօգեանը, իր ներդրումը բերելով իր երէց գրչեղբայրներուն կողքին, դառնալով ջերմեռանդ աշխատակիցներէն մին Ռոպէր Հատտէճեանի խմբագրապետութեամբ լոյս տեսնող «Մարմարա» օրաթերթի:

Համաշխարհային Բ. Պատերազմէն ետք յայտնուող վերոյիշեալ տղաքը տակաւ առ տակաւ պիտի հիմնաւորէին գրական նոր շարժումի մը, գրական նոր դպրոցի մը սիւները, որոնց քովն ի վեր Գարակէօգեան՝ յատկապէս թրծուելով խրախուսիչ շունչով Կարպիս Ճանճիկեանի, ստեղծեց ի'րը, հունաւորեց ի'ր գրական-բանաստեղծական ուղին, հարստացնելով պոլսահայ գրականութեան զանաւարանը, որ 1915-էն ետք շարունակուած էր աւշալորդիլ արեւմտահայ ոսկեհոտ օղակին կապուած Մատթէոս Զարիֆեանի, Յակոբ Մնձուրիի եւ ասոնց նման ականաւոր գրական դէմքերու գործերով:

Վարդերես Գարակէօգեան թէեւ երկար չմնաց Պոլիս ու չհասաւ տալու նշանակալից երկեր 60-ականներուն, սակայն Հայաստան գաղթելէ ետք՝ հոնկէ ալ Միացեալ Նահանգներ՝ հանդէս եկաւ ուշագրաւ երկերով, իր տեղը ամրագրեց ոչ միայն իբրեւ քերթող, այլեւ խմբագիր ու մանկագրական երկերու հեղինակ:

«Մարմարա» օրաթերթին մէջ տպուած իր առաջին քերթուածէն շատ չանցած՝ 1960-ին, Պոլսոյ մէջ լոյսի բարիքին եկաւ իր առաջին քերթողագիրքը՝ «Իմ Մասիս» խորագիրով, արժանանալով յատկապէս պոլսահայ նորարարական շարժումի տղոց ջերմ գնահատանքին, մինչ պահպանողական ուղեգիծը բռնած որոշ գրաքննադատներ հեղեղական վերաբերմունք ցոյց տուին Գարակէօգեանի երախայրիքին հանդէպ:

«Մարմարա»ի հետ Գարակէօգեանի հոգեկան կապին անդրադառնալով, տեղին է յայտնել, որ 60-ականներու սկիզբներուն, ան իր երէց գրչեղբօր՝ Օննիկ Ֆէրճեանի հետ շրջան մը համատեղ հրատարակեցին «Մարմարա» օրաթերթի մանկապատանեկան էջը՝ խրախոյս տալով յատկապէս գրական նոր ուժերու ընձիւղումին, ծաղկումին: Մանկապատանեկան գրականութեան սիրահար Գարակէօգեան, տարիներ ետք՝ 1981-ին, Զարեհ Խրախունիի հետ ալ գործակցելով, արեւմտահայերէնի վերածեց Յովհաննէս Թումանեանի մանկական աշխարհի պատմութեանը, հեքիաթները:

1959-ին, հազիւ քսանամեայ գրող մը, Մկրտիչ Մարկոսեանին (Տիգրանակերտի Խանչէբէթ թաղը ծնած, 23 Դեկտեմբեր 1938-ին, մահացած է Պոլիս, 7 Ապրիլ 2022-ին) հետ Գարակէօգեան խմբագրեց «ԹՕ» ամսագիրը, որ այդ ժամանակներուն կը համարուէր պոլսահայ գրականութեան ամենակարեւոր բեմը: Աւելի քան 50 մանկապատանեկան գրքոյկներ Գարակէօգեանէն լոյս են տեսած «ԹՕ»ի թիւերուն մէջ: Նոյն «ԹՕ» ամսագիրին մէջ է, որ Զարեհ Խրախունիին առիթ ընծայուած էր լուսաբանելու, մեկնաբանելու իր ստեղծած «Աւարկայական Խորհրդանշապաշտութիւն» շարժումը: Առաւել, «ԹՕ»-ն կարեւոր բեմ կը համարուէր նոր գրողներուն համար, որոնք իրենց արդիաշունչ ստեղծագործութիւնները յառաջ մղելով կը միտէին ձեռքագտնիլ դասական կապանքներէն: Դժբախտաբար, սակայն, կարճատեւ կեանք մը ունեցաւ այս ամսագիրը:

Արդարեւ, իր երախայրիքի լոյս ընծայումէն երկու տարի ետք՝ 1962-ին, դարձեալ Պոլսոյ մէջ, Գարակէօգեան հրատարակեց իր քերթուածներու երկրորդ ժողովածուն՝ «Զոյգ Աչքերէս» խորագիրով: Այսպէս, 60-ականներու սկիզբներուն, գրեթէ միաժամա-

նակ մէկը միւսին ետեւէն հրապարակ կ'իջնէին Զահրատի «Մեծ Քաղաքը» (1960), Հայկազուն Գալուստեանի «Գործիս Ճամբուն Վրայ» (1962), Զարեհ Խրախունիի «Քար Կաթիլներ» (1964), Արսէն Ճանեանի «Արեւուն Տակ» (1964), Ռոպէր Հատտէճեանի «Յակոբ Պարոնեանի Մտերմութեան Մէջ» յողուածաշարքը (1965) եւ այլ գրողներու երկերը, խանդավառութեան խրախուսիչ մթնոլորտ մը ստեղծելով պոլսահայ համայնքէն ներս:

Բացի «Իմ Մասիսը» եւ «Զոյգ Աչքերէս» քերթողագիրքերէն, Գարակէօգեան ներդրում ունեցած է՝ ինչպէս նչեցինք՝ մանկական գրականութեան մէջ, հրատարակելով «Շնիկիս Հետ» (Պոլիս, 1961) եւ «Կենդանիներուս Խաղերով» (Պոլիս, 1962) գիրքերը, որոնք յետագային արժանանալով երկրորդ տպագրութեան՝ լոյս տեսան Փարիզի մէջ, 70-ականներուն:

1963-ին, Վարդերես Գարակէօգեան բարձրագոյն ուսման համար կը մեկնի Հայաստան, ուր 1967-ին կ'աւարտէ Երեւանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) բանասիրական բաժանմունքը: Կ'աշակերտէ Հրանդ Թամրազեանին, էտուարտ Զրբաշեանին, Մ. Մկրեանին եւ նման անուանի գրողներու՝ անոնցմէ ստանալով գրականագիտական հարուստ գիտելիք ու պաշար, միաժամանակ զարգացնելով իր գրարուեստը: Այս շրջանին է որ 1965-ին Փարիզի մէջ լոյս կը տեսնէ իր երրորդ քերթողագիրքը՝ «Շատ Լաւ» խորագիրով:

Համալսարանական ուսումը աւարտած տարին ան կ'անցնի Փարիզ, ուր կը հետեւի Սորպոնի գրականութեան եւ գրականագիտութեան դասընթացներու՝ ուսումնասիրելով Անատոլուի հայ աշուղներու, քրտական բանահիւսութեան եւ ժողովուրդներու մշակութիւններու առանձնաշատկութիւնները:

Շար.ը էջ 14

JOIN US FOR OUR

KIDS PAINTING CLASSES

CLASSES START JANUARY 9, 2026

EVERY FRIDAY AT 5PM
WITH TEACHER MANIA GERMAGIAN

AEBU CENTER
1060 N ALLEN AVE. PASADENA, CA 91104

REGISTER NOW!
WITH NOR SEROUNT/AREV
(626) 738-5639

Խաւարէն Դէպի Լոյս

ԴՈԿՏ. ԶՐԱՅՐ ԵՒԵԵԱՆ

«Վասնզի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը տրուեցաւ եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ: Անոր անունը պիտի կոչուի սքանչելի, խորհրդակիրց, հօր Աստուած, յաւիտեանականութեան հայր, խաղաղութեան իշխան: Դաւիթին աթոռին վրայ ու անոր թագաւորութեանը վրայ Անոր իշխանութիւնը մեծնալուն ու խաղաղութեանը սահման չկայ: Որպէսզի հիմակունէ մինչեւ յաւիտեան իրաւունքով ու արդարութիւնով հաստատէ ու զօրացնէ զանիկա»: Եսայեայ 9:6-7

Եսայի մարգարէին խօսքը կու գայ խաւարի ու ազգային տառապանքի մէջ ապրող իրականութեան մը փորձառութեան մէջէն: Իսրայէլի ժողովուրդը ծնշուած կեանք մը կ'ապրէր եւ այս քաղաքական, հոգեւոր եւ բարոյական խաւարոտ իրավիճակներու մէջէն: Այս խաւարին մէջ Աստուած կը յայտնէ լոյսի մը ծագումը՝ Մանուկը, որ պիտի բերէ փրկութիւն՝ մարդուն, հաւաքականութեան ու ազգին եւ որուն մէջէն պիտի դրսեւորուի Նոր Կեանքը: Քրիստոնէական աստուածաբանութեան մէջ այս մարգարէութիւնը կը նկատուի Փրկիչին Յայտնութիւնը:

Այս մանուկը միայն թագաւոր չէ, այլ Աստուած, որ մարդացաւ եւ եղաւ մանուկ, որպէսզի լոյսը սփռէ աշխարհին: Այս իրականութենէն մեկնելով, Ան կը կոչուի «հօր» եւ «Հայր յաւիտեանական»: Այս անունները կը հաստատեն, թէ փրկիչը՝ իմա Աստուած, որ մարդացաւ, կը գերազանցէ մարդուն ստեղծած կեանքի բոլոր սահմանները եւ չափանիշերը. «Անոր իշխանութիւնը մեծնալուն ու խաղաղութիւնը սահման չիկայ»: Այս պիտի նշանակէ, թէ մանուկին բերած փրկութիւնը անսահման է եւ կ'անցնի աշխարհի ստեղծած բոլոր պարագաները եւ խոչընդոտները:

Աստուծոյ այս իշխանութիւնը, որ անսահման է եւ անծայրածիր, որովհետեւ Ան մարդուն եւ հաւաքականութեան մօտ ըլլալու համար եկաւ եւ ունէր մէկ գլխաւոր առաքելութիւն՝ մարդուն եւ աշխարհին փրկելու եւ առաջնորդելու դէպի Նոր Կեանքը՝ իմա լոյսը: Այս իմաստով, Աստուած անհասանելի չեղաւ մարդուն համար եւ

հոսկէ պիտի բացատրել, թէ Ան ինչու մարդացաւ եւ ծնաւ մսուրին մէջ: Աստուած շատ մօտիկ եղաւ ու կը շարունակէ մօտիկ մնալ մարդուն, որպէսզի նոյն մարդը պէտք չունենայ երկար ճամբայ քալելու կամ սպասելու ժամադրութեան մը, որպէսզի «Հօր Աստուծոյ» ներկայանայ: Այս «Հօր Աստուածը» մարդուն եւ մեր բոլորին հետ ու անոր կողքին եղաւ եւ կը շարունակէ մնալ:

Քրիստոսի իշխանութիւնը եւ շնորհած խաղաղութիւնը նոյնքան կեդրոնական են աստուածաբանութեան մէջ: Խաղաղութիւն հասկացողութիւնը չի նշանակէր պատերազմի բացակայութիւնը, այլ ամբողջական հաշտութիւն՝ Աստուծոյ, մարդուն եւ աշխարհի հետ: Այս խաղաղութիւնը կը հաստատուի արդարութեան եւ ճշմարտութեան վրայ: Այս խաղաղութեան բացայայտումն է որ Եսայի մարգարէութիւնը կը դարձնէ ոչ միայն հոգեւոր այլ նաեւ ազգային յոյսի պատգամ՝ խաւարէն դէպի լոյս հասնելու յոյսի պատգամը: Այս իմաստով, իւրաքանչիւր անհատ, հաւաքականութիւն եւ ազգ, որ անցած է կոտորածներու, գաղթի, կորստեան եւ անարդարութեան մէջէն, կրնայ իր պատմութեան՝ իմա խաւարի փորձառութիւնը, տեսնել Եսայի մարգարէին նկարագրականին մէջէն: Եսայի մարգարէի նկարագրականը մարդուն եւ հաւաքականութեան խաւարի վիճակէն սթափելու կոչ է, երբ ան-անոնք ապրած են ու կ'ապրին Աստուածմէ հեռու կեանք մը: Եսայի մարգարէն կու տայ յոյսը, թէ մարդուն եւ հաւաքականութեան ապրած խաւարի վիճակը ունի ելք: Իսկ ելքը «մանուկին» մէջ ու մէջէն է, որ մարդկութիւնը կը տանի լոյսի իրականութեան:

Հայ ժողովուրդի ապրած պատմութեան փորձը կու գայ հաւաստիացնելու, թէ Եսայի մարգարէի խաւարէն դէպի լոյսի հասցնող ճշմարտութեան յոյսը ինչքան իրական է: Հայ ժողովուրդը ունի ապրուած խաւարի կեանքէն դէպի լոյս տանող փորձը: Հայ ժողովուրդին համար այս խոստում-յոյսը դարեր շարունակ եղած է կեանքի եւ գոյատեւման յենարան: Յեղասպանութիւն, բռնագաղթ, հայրենագրկում, բայց նաեւ յարութիւն: Յարութիւնը հայուն:

Մանուկը որ ծնաւ եւ որ

շնորհեց լոյս՝ դարձած է ու կը շարունակէ դառնալ ազգային-հաւաքական (վեր)ապրող կեանքի հիմք եւ անոր շարունակականութեան խորհրդանիշ: Հայուն համար «մեզի մանուկ մը ծնաւ» դարձած է կեանքի յաղթանակը մահուան վրայ: Եսայի մարգարէին այս հատուածը՝ հայուն ապրած պատմութեան հոլովոյթներու մէջէն, վերածուած է ազգային ապրող վկայութեան: Հայը, որ իր հաւաքական թէ ազգային կեանքի մէջէն անցած է խաւարի փորձառութիւնները, ինք ալ կրցած է դարձնալ ծնիլ եւ կերտել կեանքը նոյնինքն այս լոյսի բերած ու շնորհած ապահովութեան մէջէն:

Հայուն կեանքը այսօր դարձեալ մշուշապատուած է խաւարով, որ ակնյայտ է իր կեանքի տարբեր բնագաւառներու մէջ: Արտաքին իմաստով հայը շրջապատուած է աշխարհաքաղաքական իրավիճակներով, որոնք կը խաւարեն հայուն կեանքը: Բայց նոյնքան իրական են նաեւ հայուն ներ-հայկական իրականութիւնները, ուր հայուն անմիաբանութիւնը, ատելութիւնը, քէնը, անհանդուրժողականութիւնը եւ հայը հայուն դէմ, հայուն կեանքը այսօր խաւարի վերածուած է: Հայը այսօր կանչուած է կրկնելու իր պատմութեան փորձը եւ անոր հաւատամբը: Հայը պէտք է դառնայ «ծնած մանուկին» խոստացած ու բերած լոյսի յոյսին:

Այսօր, իւրաքանչիւր հայ՝ ես, դուն, ընտանիք, հաւաքականութիւն եւ ազգ, պէտք է ընդառաջէ «ծնած մանուկին» լոյսի հրաւերը: Այս լոյսը, որ կեանք կը կերտէ եւ խաղաղութիւն ու համերաշխութիւն կ'ապահովէ: Այսօր, իւրաքանչիւր հայ պարտի տեղ շինել իր անհատական, ընտանեկան, հաւաքական եւ ազգային կեանքերուն համար «ծնած մանուկին» նոր կեանքի իրականութեան:

Փրկիչը ծնաւ աշխարհին համար բայց նաեւ հայուն համար: Այս փրկիչը հեռու տեղ մը չէ ծնած: Ան ծնած է իւրաքանչիւր անհատի՝ ներառեալ հայուն, մօտը եւ հայուն կողքին: Ան կրնայ մեզ տանիլ խաւարէն դէպի լոյս:

Եսայի մարգարէի այս մարգարէութիւնը ապրող իրականութիւն է: Այս իրականութիւնը ապրած է պատմութեան տարբեր հոլովոյթներուն մէջէն ու տակաւին կը շարունակէ ապրիլ: Մարգարէին այս յոյսը ուժ է, որ կը հաստատէ կամուրջ՝ երկնային եւ երկրային իրականութիւններու միջեւ: Երբ երկրային իրականութիւնը խաւարի մէջ է, երկնայինը կ'ապահովէ լոյսը եւ մարդուն ու հաւաքականութեան կեանքը կ'իմաստաւորուի եւ կը զօրանայ ինչքան որ ալ երկրային պայմանները դժուար ըլլան:

Հայը իր պատմութեան առանցքին հաւատաց այս «ծնած մանուկին» եւ կրցաւ խափանել խաւարը եւ վերապրիլ: Այս մարգարէութիւնը այսօր հայուն համար զգաստութեան կոչ է: Կոչը՝ հայուն ներկայ օրերու խաւարի կեանքը դարձնելու լոյսի: Լոյսին հասնելու համար մենք նորէն պիտի կառչինք «մանուկին», որ «ծնաւ մսուրի» մէջ: Ան պիտի դարձնէ խաւարը լոյսի: Եւ հայը, եթէ կը փափաքի ապրիլ-վերապրիլ, պարտի ընդգրկել այս լոյսը:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Ձեզի եւ մեր բոլորին մեծ Աւետիս: Իսկ Աւետիսը: Լոյսն է, որ խաւարը կը խափանէ: Եւ որ լոյսը կը ստեղծէ:

Եսայի մարգարէի խօսքը այսօր ուժեղ եւ ապրող իրականութիւն է՝ խաւարէն դէպի լոյս:

Կառչինք լոյսին, որպէսզի ապրինք:

You are cordially invited to a
Dinner party & Bingo



MADZUNOV KUFTA

Hosted By:
Homenmen Ladies Auxiliary

16 JANUARY at 7:30 PM
Donation \$50

AEBU Center
1060 Allen Ave., Pasadena, CA 91104

RSVP:
Knar: 626-491-7899
Lena: 818-395-7967



EXPERIENCED **PERSONAL INJURY**
ATTORNEYS SERVING **LOS ANGELES**

 WWW.FORWARDLG.COM

 (818) 471-8389

2025-ին, Հայաստան Արցախ Ֆոնտը Հայաստանին Հայթայթած է \$41 Միլիոն Արժեքով, Իսկ Լիբանանին՝ \$4 Միլիոն Արժեքով Դեղորայք



2025-ի ընթացքին, Հայաստան Արցախ Ֆոնտը \$45 միլիոն ընդհանուր արժեքով՝ կեանք փրկող եւ զանազան տեսակի դեղորայք ու բժշկական պիտույքներ նուիրած է Հայաստանին (\$41 միլիոն) եւ Լիբանանին (\$4 միլիոն):

Այս դեղերն ու պիտույքները Հայաստան եւ Լիբանան ուղարկուած են օդային ու ծովային 30 անջատ առաքումներով:

«Զափազանց բարձր կը գնահատենք այս արժէքաւոր դեղերն ու պիտույքները, նուիրուած՝ ամերիկեան բազմաթիւ առեւտրական մեծ ընկերութիւններու եւ բարեգործական կազմակերպութիւններու կողմէ, որոնք կը հանդիսանան Հայաստան Արցախ Ֆոնտի երկարամեայ գործընկերները», յայտնեց Հայաստան Արցախ Ֆոնտի Նախագահ Յարութ Սասունեան:

Անցեալ 36 տարիներուն, Հայաստան Արցախ Ֆոնտն ու զայն նախորդած Միացեալ Հայկական

Ֆոնտը Հայաստանին ու Արցախին հայթայթած են աւելի քան 1.1 միլիառ տոլար ընդհանուր արժէքով մարդասիրական օժանդակութիւն՝ 168 թուիջներով եւ 2,624 ծովային արկղերով:

«Հայաստան Արցախ Ֆոնտին կանոնաւորաբար կ'առաջարկուի, բոլորովին անվճար կերպով, միլիոնաւոր տոլար արժէքով կեանք փրկող դեղեր եւ բժշկական պիտույքներ», Սասունեան յայտնեց: «Ուրեմն կը քաջալերենք ձեր առատաձեռն նուիրատուութիւնները, որպէսզի կարենանք շարունակաբար այս կենսական օժանդակութիւնը ուղարկել Հայաստանի բոլոր բժշկական կեդրոններուն: Հայաստան Արցախ Ֆոնտին յատկացուած բոլոր նուիրատուութիւնները տուրքէ զերծ են (tax-deductible)»:

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Հայաստան Արցախ Ֆոնտին, անոր իմէյլի հասցէով՝ sassoun@pacbell.net:

Պոլսահայ Տաղանդաւոր Բանաստեծ

Շարունակուած էջ 12-էն

1971-ին նոր գիրք մը իրմէ՝ «Հատընտիր» (Պէյրութ) խորագիրով, որ մաս կը կազմէ «Սփիւռքահայ ժամանակակից Բանաստեղծներ» մատենաշարին: Տաս տարի ետք՝ 1981-ին վերջնականապէս Լոս Անճելըս հաստատուելէ ետք, «Ապրիլ» գրատան հովանաւորութեամբ եւ «էրեբունի» հրատարակչութենէն լոյս կը տեսնէ «Կեանքին Զուգահեռ» բանաստեղծութիւններու հատորը: Այս քերթուածները կ'ընդգրկեն 1974-1980 տարիներու իր արարումները 6 բաժիններով՝ 144 էջերու մէջ: Այստեղ, վարդերես Գարակէօգեան կ'երգէ մարդուն կեանքին առջեւ ծառացած դժուարութիւններու յաղթահարումը, անոր յոյսն ու հաւատքը եւ ճշմարտութիւնը բացայայտելու, այդ ճշմարտութեան դէմ ցցուող չարիքը, կեղծիքը, սուտը տապալելու իր անկոտորում կամքը:

Ութ տարի ետք լոյսի բարիքին կու գայ բանաստեղծութիւններու նոր հատոր մը՝ «Վերցրէք Մի Պոետ Երկնքի Մովից» (1989, Լոս Անճելըս, 135 էջ), 5 բաժիններով, դարձեալ «էրեբունի» հրատարակչութենէն: 1979-1986 տարիներու իր քերթուածները ամփո-

փող գիրք մըն է այս մէկը, ուր ան կ'երգէ հայրենի եզերքն ու բնութիւնը, անոր երկինքը, արեւն ու ջուրերը: Առաւել շեշտուած են Մայր Հայաստանի հանդէպ գրողին սէրն ու հաւատքը, անոր կառչելու, Հողին գուրգուրանքով ապրելու իր խոր համոզմունքը:

2005-ին «Արարման Հետ» հատորին հրատարակչութեան առթիւ եւ նոյն տարին, Լոս Անճելըսի Պոլսահայ Միութեան մատենաշարով լոյս կը տեսնէ «Դեռ Զեմ Սպառել» խորագրեալ հատորը (309 էջ), որուն յառաջաբանին մէջ Գարակէօգեան երախտագիտական ջերմ խօսքերով հանդէս կու գայ իր ընկերոջ՝ Երուանդ Գոչունեանին մասին, որուն աշխատանքը՝ հատորը պատրաստելու, ձեռագիրները դասաւորելու եւ մեքենագրելու գծով եղած էր անչափելի զոհողութիւններով լի: Ինչպէս նկատելի է գործերուն ալ խորագիրներէն, Երեւան մեկնելէ ետք Գարակէօգեան ստեղծագործեց արեւելահայերէնով՝ Միացեալ Նահանգներ հաստատուելէ ետք ալ: Տեղ-տեղ ալ այդ բանաստեղծութիւններէն շատեալ իսաւորապէս մը կը կազմեն արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի: Սակայն ան գործածեց դասական՝ Մեսրոպեան ուղ-

Պոլսահայ Երգչուհի Սիպիլի «Արեւին Մօտ» Երգը Տարուան Լաւագոյններու Եռեակին Մէջ

Երգահան եւ երաժշտական քննադատ Նայիմ Տիւմէնէր, ընկերային ցանցի իր էջերուն վրայ հրապարակեց տարուան լաւագոյն երգերու եւ երաժշտական ալպոմներու ցանկը:

Ուրախալի է կարդալ որ լաւագոյն երգերու ցանկի տասնեակին մէջ՝ երրորդ կարգի վրայ է պոլսահայ սիուան երգչուհի Սիպիլի «Արեւին Մօտ» երգը: Յիշեցնենք որ Սիպիլ շուրջ երկու ամիս առաջ, հրապարակ հանեց այս երգի սրտազրաւ տեսահոլովակը, որ՝ նկարահանուած է ամերիկահայ յայտնի բեմադրիչ Մաքըլ Կիւրճեանի կողմէ:

Լիոնի Ամսաթերթը Հայերու Մասին

«Լիոնի Փողոցները («Լէ Ռիւ Տը Լիոն») ամսաթերթը՝ Դեկտեմբեր 25-ին, լոյս ընծայեց իր 132-րդ թիւը, որպէս գլխաւոր խորագիր ընտրելով «Հայաստանի Յիշողութիւններ» կարգախօսը: Այդ թիւը կը պատմէ 1915-ի տարագրութենէն ետք, Ֆրանսայի մէջ ապաստանած հայերու մասին: Ռոնի հովիտը եւ Լիոնի շրջանը՝ դարձան այն հանգրուաններէն մէկը, ուր հայկական սփիւռքը վերապրեցաւ եւ բարգաւաճեցաւ:

Գործի նիւթին հեղինակներն են՝ Վերժին Օլանիէ-Ժուլիէ եւ Գլոմիւս Թիգի: Իսկ գծազրութիւներն ու գունաւորումը կատարած է Ֆրան: Հրատարակիչը՝ «Լ'էփրի-սէրի Սէքուանսիէլ»ն է:

Պատմութիւնը կը սկսի Անթոնէն-Փոնսէ հրապարակի 1915-ի յուշակոթողէն: Այնուհետեւ հեղինակները կը կեդրոնանան քանի մը ականաւոր հայերու վրայ, որոնք իրենց ուրոյն հետքը ձգած են Լիոնի պատմութեան վրայ: Նափոլէոն Պիւլլիւքեան՝ յինարարութեան եւ անշարժ գոյքի ոլորտին մէջ հարստութիւն կուտակած գործարար է, որ նոյն ատեն եղած է գեղանկարչութեան մեծ հաւաքորդ եւ քաղցկեղի դէմ պայքարի հետազոտութիւններու մեկենաս: Ճիպրայէլ Պահատուրեան՝ սկսելով փոքր նպարատունէ մը, ուր կը վաճառ-

ղագրութիւնը:

Պիտի ընդգծել, որ կարդալով ու խորանալով վարդերես Գարակէօգեանի ստեղծագործութիւններուն մէջ, ընթերցողը իր մէջ տակաւ առ տակաւ պիտի կազմէ արդարութեան կառչած նկարագիր, ի յայտ պիտի բերէ մարդկայնութեամբ շեշտուած ջիղ ու ոգի, փիլիսոփայական խոհեր: Հետեւեալ տողերէն կ'արտացոլան վերել ըստածներուն փաստը.-

Միամիտ խոհեր, մանկամիտ խոհեր,

Թեւածէք այլուր, ինձ հանգիստ թողէք, խիղճն այս աշխարհիս վաղուց է քնել:

Կամ ուրիշ տեղ մը աւելի յուսալի,

Քանի մը թելադրութիւններ ու հայեացքներ...

Շուրջ հունար՝ ընկած հողից անգին,

Կարծեալ աղամանդից Ոչ թէ օրին՝ այլ ժամ առաջ

Գերադասել պէտք է գիտնալ: Յիրաւի, հայ մշակոյթի տարածման առումով անխոնջ դես-



ուէին արեւելեան եւ միջերկրականեան համեմներ ու մթերքներ՝ հիմնեց ցանց մը, որ այսօր ալ Լիոնի մէջ յայտնի է իբրեւ նրբահամ ուտեստեղինի կեդրոն մը:

Թէեւ տասը էջերը բաւարար չեն ամբողջական պատմութիւնը ներկայացնելու համար, սակայն այս աշխատասիրութիւնը՝ գեղեցիկ պատկերազարդումներով, հետաքրքրական եւ յուզիչ ակնարկ մը կը նետէ հայկական ներկայութեան վրայ՝ յաջողութեամբ եզրափակելով ամսաթերթին տարին:

ՄԱՐՄԱՐԱ

պան մ'եղաւ վարդերես Գարակէօգեանը: Եղաւ որակաւոր հատորներու հրատարակիչ, ինչպէս՝ Գրիգոր Խանջեանի իր պատրաստած «Սուրբ էջմիածին» պատկերազարդ հատորը (1981), «էջմիածինի Գանձատուն» (արուեստի գանձերու հաւաքածոյ, որ կը գտնուի էջմիածինի «Ալէք եւ Մարի Մանուկեան» թանգարանին մէջ, 1984), «Արարատ» (ալպոմ, 1984) եւ այլ բազմաթիւ հատորներ ու հաւաքածոներ:

Պոլսահայ, հայրենի եւ սփիւռքահայ գրականութեան պատմութեան մէջ, վարդերես Գարակէօգեանի անմեռ գործն ու վաստակը ունին արժանի տեղ: Ան ոչ միայն իբրեւ բանաստեղծ, մանկագիր եւ խմբագիր, այլեւ հայ մշակոյթի եւ արուեստի նուիրեալ ու անձնուէր գործիչ-տարածիչն եղաւ, որուն մեզի թողած գրական ժառանգութիւնը այս իմաստով հարուստ է եւ արժանի՝ առաւել խոր ուսումնասիրութեան:

«Ծաղիկ»-«Աղթամար»

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով Կիրակի, 11 Յունուար 2026-ին յաւարտ Ս. Պատարագի տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ 2215 East Colorado Blvd, Pasadena, CA:

Սգակիրներ՝
Այրի Տիկ. Վարդուկ Գազանճեան
Տօքթ. եւ Տիկ. Յուլակ Գազանճեան
Տէր եւ Տիկ. Նարեկ Գազանճեան

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հանգուցեալ **ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ** ըտանիքը Տիկ. Վարդուհի Գազանճեան եւ զաւակները Տօքթ. Յուլակ Գազանճեան եւ Նարեկ Գազանճեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց սուգին հեռաձայնելով, այցելութեամբ եւ փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններով:

Առ այդ Գազանճեան ընտանիքի անմիջական պարագաները \$2000 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի Հալէպի Կիլիկեան վարժարանի ֆոնտին կ'ըլլան հետեւեալ նուիրատուութիւնները

Զարուկ Մարտիկեան	\$250
Տէր եւ Տիկ. Կարօ Նալպանտեան	\$250
Գազանճեան ընտանիք	\$200

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով կատարուեցան հետեւեալ նուիրատուութիւնները «Մասիս» շաբաթաթերթին որոնց համար մեր շնորհակալութիւնները կը յայտնենք:

«ՄԱՍԻՍ»

Տէր եւ Տիկ. Վահէ եւ Նորա Իմաստունեան	\$500
Տիար Մհեր Տէր Յովհաննէսեան	\$500
Հայ Մարմնամարզական Միութիւն Հ.Մ.Մ. Lark Music Society	\$400
Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Նովա Իմաստունեան	\$300
Տիկ. Մարիամ Իմաստունեան	\$300
Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Հայկօ Գալթագճեան	\$250
Տիկ. Մարի Գալթագճեան	\$250
Տէր եւ Տիկ. Արմէն եւ Ռիթա Պարանեան	\$200
Տէր եւ Տիկ. Համբիկ եւ Նայիրա Սարաֆեան	\$200
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Պօյամեան	\$200
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Ծովիկ Քէօրողլեան	\$200
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Լուսին Գասպարեան	\$200
Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան	\$200
Ս.Դ.Հ.Կ. Ժիրայր Մուրատ մասնաճիւղ (Պաթոն Ռուժ)	\$200
Տէր եւ Տիկ. Աբրահամ եւ Նորա Թաշճեան	\$200
Տէր եւ Տիկ. Դանիէլ եւ Անի Իմաստունեան	\$200
Տիկ. Պիաթրիս Կանիմեան	\$200
Տէր եւ Տիկ. Մինաս եւ Սոնիա Մալճեան	\$200
Baghboudarian Properties	\$200
Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Հելեն Զարրզեան	\$150
Տէր եւ Տիկ. Տօքթ. Կիրակոս եւ Անի Մինասեան	\$150
Տէր եւ Տիկին Համբարձում եւ Անահիտ Աղպաշեան	\$100
Տիար Կիւրեղ Մանկրեան	\$100
Տիկ. Վանտա Պէրպէրեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տէփոյեան	\$100
Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Արուսեակ Գրիգորեան	\$100
Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Գօճապապեան	\$100
Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Լենա Խոտանեան	\$100
Տէր եւ Տիկ. Վարդիվառ եւ Նայիրի Կարկուտեան	\$100
Տիկ. Քնարիկ Զարրզեան	\$100
Տիար Արա Ֆէրմանեան	\$50
Տիար Աւօ Մազմանեան	\$50

Խաւարի Մէջ Լոյս

Շարունակուած էջ 11-էն

ուղղիչ, այլ որպէս հակադրութեան խորհրդանիշ աշխարհի մը դէմ, ուր ճշմարտութիւնը կը բացակայի, յոյսը կը դալկանայ, իսկ հաւատքը կը բռնաճնշուի:

Սուրբ ծննդեան պատմութիւնը ռոմանթիկ իտէյալականցում մը չէ: Հազիւ ծնած՝ երեխան արդէն սպառնալիքի տակ է: Հերովդէս Մեծ, Յուդայի թագաւորը, անպաշտպան մանուկի մը անձին մէջ նոյնիսկ վտանգ կը տեսնէ իր իշխանութեան հանդէպ: Հին կտակարանի մարգարէութիւններէն նորածին Յիսուսին տրուած «Թագաւոր հրէից» պատուանունն իսկ բաւական է, որ ան իր իշխանութիւնը կորսնցնելու հիւանդագին մոլուցքէն մղուած դիմէ քաղաքական սարսափելի ոճիւրի՝ կոտորել տալով Բեթղեհէմի մէջ մինչեւ երկու տարեկան բոլոր մանուկները: Արդարեւ, սուրբծննդեան պատմութիւնը կը սկսի ոչ թէ զրկաբաց ընդունելութեամբ, այլ փախուստով: Ոչ թէ նորածինին պարգեւած ուրախութեամբ, այլ վախով կը համակուի սուրբ ընտանիքը: Եգիպտոս՝ աքսորի եւ պանդխտութեան վայրը, կը դառնայ մարմնացած Աստուածորդւոյն առաջին ապաստանարանը:

Ահաւասիկ ճիշդ այս է սուրբծննդեան յաւիտենական ուղերձը: Հաւատքը հիմնուած չէ քրիստոնէական քաղաքականութեան յաջողութեան, կրօնական հաստատութիւններու բարոյական ամբողջականութեան եւ հօրներու արդարադատութեան վրայ: Ան հիմնուած է աստուածային մարմնացած Սիրոյն վրայ, որ դիտակցաբար կը մտնէ մեր պատմութենէն եւ ժամանակի սահմաններէն ներս, ուր կը բացակայի արդարութիւնը եւ երաշխաւորուած չէ ճշմարտութեան պաշտպանութիւնը:

Սուրբ Ծնունդը չի պատգամեր, որ այս աշխարհը արդար է կամ թէ անկէ վերացած են տառապանքն ու անարդարութիւնը: Սակայն կ'աւետէ, որ Աստուած զայն չի լքեր: Ս. Ծնունդով կը բացայայտուի մարդկութեան հանդէպ Աստուծոյ անվերապահ սէրը, որ ենթակայ չէ պայմաններու, եւ հաւատարմութիւն, որ կը յարատեւէ նոյնիսկ մարդկային կեանքի ու պատմութեան ձախողութիւններուն մէջ:

Ս. Ծնունդով սկիզբ առած Փրկագործութեան խորհուրդը կը կայանայ ոչ թէ մեր վարած աշխարհակարգի արդարացումին, այլ խաչին խորհուրդով կնքուած մարդկութեան փրկութեան մէջ: Այս փրկութիւնը քաղաքական յաղթանակ չի պահանջեր մեզմէ, այլ հաւատք եւ համակ ինքնանուիրում՝ վստահելու մեր անձր աստուածային հաւատարմութեան, նույնիսկ հոն, ուր խորտակուած է մարդկային յոյսը:

Ի վերջոյ, հաւատքէն ի՞նչ կը մնայ... Ամենեւին ոչ այն պատրանքը, թէ քրիստոնէական գերհզօր պետութիւնները ամբողջապէս վստահելի են: Ոչ ալ այն ակնկալիքը, թէ հաւատքը մեզ կը պաշտպանէ տառապանքէն: Այլ՝ այն վստահութիւնը, որ Աստուած ներկայ է այնտեղ, ուր մարդիկ զրկուած են իրենց իրաւունքէն, հալածուած, տեղահանուած եւ լուրջութեան մատնուած են: Սուրբծննդեան պատգամը յաղթանակի մը հռչակումը չէ, այլ, բառին բուն իմաստով, աւետիս

մը, աստուածային խորախորհուրդ խոստում մըն է: Եւ թերեւս ճիշդ այս է պատճառը, որ հաւատքը կը գոյատեւէ այնտեղ, ուր մնացած ամէն ինչ խորտակուած է:

Քրիստոնէական հաւատքի հորիզոնին վրայ պատմութիւնը պարզապէս կորուստներու յաջորդականութիւն չէ, այլ անաւարտ գործընթաց, որ միշտ բաց է փոփոխութիւններու եւ նոր սկիզբներու համար: Ոչինչ անշրջելիօրէն կը մատնուի մոռացութեան, քանի որ Աստուծոյ ներգործութիւնը չի սահմանափակուիր միայն պահի մը մէջ, այլ կը գերազանցէ ժամանակի վերաբերեալ մեր բոլոր ընկալումները: Այն, ինչ կորած կը թուի ներկայիս, տակաւին ենթակայ է վերափոխուելու հնարաւորութեան, քանի որ Աստուծոյ հաւատարմութիւնը կապուած չէ մարդկային ուժի տրամաբանութեան կամ պատմական որոշումներու արդիւնքին հետ: Այս իմաստով յոյս ունենալ չի նշանակեր միխիթարուիլ՝ մտահանելով կորուստը, ոչ ալ վաղաժամ յուսադրուիլ՝ զայն վերստին նուաճելու պատրանքով, այլ համբերատար հաստատակամութեամբ յարատեւել կորսնցուցածի ու դեռ չիրականացած ապագայի յարաբերութեան միջեւ: Այստեղ կարելոր նշանակութիւն ունի հաւաքական յիշողութիւնը: Յիշողութիւնը կրաւորական յետադրած հայեացքով անցեալին նայիլը չէ, այլ գիտակցուած մերժումն է անցեալը անցած եւ զայն անդառնալի իրավիճակ մը համարելու իրավիճակին: Անոնք, որոնք կը յիշեն՝ կը պահպանեն իրենց ինքնութիւնը: Անոնք, որոնք կը յիշեն ու կը մերժեն մոռնալ անցեալը, բաց կը պահեն վերադարձի, վերականգնումի եւ վերանորոգումի բոլոր հնարաւորութիւնները: Հետեւաբար, Քրիստոսի միջոցով փրկութեան հանդէպ հաւատքը միշտ կը ներառէ այն համոզումը, որ տունդարձն ու կորսուածը վերստին ձեռք բերելը ամենեւին բացառուած չեն: Այսպիսով յոյսը կը դառնայ հոգեւոր դիրքորոշում, հաւատքը՝ գոյաբանական կենսաձեւ, որ կը դիմակայէ ժամանակի մաշումին իսկ սէրը՝ կեանք պարգեւող զօրութիւն, որ չի լքեր կորսուածը, այլ զայն կը վստահի Աստուծոյ հաւատարմութեան:

Սուրբծննդեան պատգամը միայն կորուստի փորձառութիւն չի ներառեր, այլ նաեւ վերադարձի եւ նոր սկիզբի մը խոստումը: Յիսուսի ծնունդի հրեշտակաձայն աւետիսին հետեւեցաւ բռնութիւնը՝ Բեթղեհէմի մանուկներու կոտորածին տխուր իրադարձութիւնը եւ սուրբ ընտանիքին պարտադրուած պանդխտութիւնը: Սակայն այս եղելութիւնը չ'աւարտեցաւ օտարութեան մէջ, այլ աքսորավայր Եգիպտոսէն տունդարձը եւ հայրենի օճախին մէջ կեանքի հետագայ զարգացումը կը կազմեն Աստուծոյ փրկագործութեան ծրագրի կատարումին սկիզբը: Այս լոյսին տակ Ս. Ծնունդը անմիջական ցաւէն անդին կը մատնանէ վերակառուցման եւ հայրենադարձութեան հնարաւորութիւնը՝ ոչ որպէս անցեալի պարզ վերականգնումը, այլ իբրեւ նորոգուած կեանք, որ կը ծնի անձնուէր հաւատարմութենէ, աննահանջ համբերութենէ եւ անսպառ յոյսէ:

«Արսենալի» Յաղթանակը՝ 3:2



Անգլիայի Փրեմիեր Լիգայի առաջնութեան 20-րդ հանգրուանին առաջատար «Արսենալը» հիւրընկալուեցաւ «Պորնմութէն» եւ յաղթանակ արձանագրեց 3:2 արդիւնքով:

Սպանացի Միքել Արտետայի գլխաւորած խումբէն տուպլի հեղինակ դարձաւ անգլիացի կիսապաշտպան Տեքլըն Ռաջար: Աչքի ինկաւ նաեւ բրազիլացի պաշտպան Կապրիել Մակալեանսը:

«Արսենալը» 48 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, իսկ «Պորնմութը» 15-րդ դիրքին վրայ է՝ 23 կէտով:

«Մանչեսթըր Սիթին» եւ «Չելսին» Յաղթողին Չպարզեցին

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 20-րդ հանգրուանին «Մանչեսթըր Սիթին» իր դաշտին վրայ մրցեցաւ Լոնտոնի «Չելսին» դէմ: Արձանագրուեցաւ հաւասար՝ 1:1 արդիւնք:

42-րդ վայրկեանին հանդիպման հաշիւը բացաւ «Մանչեսթըր Սիթիի» հոլանտացի կիսապաշտպան Թէյյանի Ռէյնստերսը:

«Չելսին» պատասխան կոլը աւելցուած ժամանակի չորրորդ վայրկեանին նշանակեց արժանիքի կիսապաշտպան Էնցօ Ֆերնանտէսը:

«Մանչեսթըր Սիթին» 42 կէտով երկրորդն է, իսկ «Չելսին» 5-րդ դիրքին վրայ է՝ 31 կէտով:

«Լիվըրփուլը» Կորսնցուց Յաղթանակի Առիթը

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 20-րդ հանգրուանին ախոյեան «Լիվըրփուլը» Լոնտոնի մէջ հիւրընկալուեցաւ «Ֆուլհեմէն» եւ վերջին վայրկեաններուն կորսնցուց յաղթանակը: Արձանագրուեցաւ հաւասար՝ 2:2 արդիւնք:

«Լիվըրփուլը» 34 կէտով չորրորդն է, իսկ «Ֆուլհեմը» 11-րդ դիրքին վրայ է՝ 28 կէտով:

«Պարսելոնային» Յաղթանակ Ապահովեցին Օլմոյի եւ Լեւանտովսկիի Կոլերը

Սպանիոյ առաջնութեան 18-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» հիւրընկալուեցաւ «Էսպանյոլէն» եւ յաղթեց 2:0 արդիւնքով:

86-րդ վայրկեանին աչքի ինկաւ իսպանացի կիսապաշտպան Տանի Օլմոն: 90-րդ վայրկեանին հիւրերու առաւելութիւնը կրկնապատկեց լեհ յարձակող Ռոպերթ Լեւանտովսկին:

«Պարսելոնան» 49 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, իսկ «Էսպանյոլը» 5-րդ դիրքին վրայ է՝ 33 կէտով:

«Ռէալի» Յաղթանակը՝ 5:1



Սպանիոյ առաջնութեան 18-րդ հանգրուանին փոխախոյեան «Ռէալը» Մատրիտի մէջ ընդունեց Սեւիլիայի «Պետիսը» եւ յաղթեց 5:1 արդիւնքով:

Հեթ-թրիքի հեղինակ դարձաւ սպանացի յարձակող Կոնալօ Կարսիան:

Միքայէլ Միքայէլեանին Տուգանած Են «Ատրպէյճան» Գրութիւնը Փակելու Համար



Հայաստանի առաջատար դահուկորդ Միքայէլ Միքայէլեանին տուգանած են մարզահագուստին վրայ «Ատրպէյճան» գրութիւնը փակելու համար: Այս տեղեկութիւնը NEWS.am Sport-ի հետ ունեցած զրոյցին ընթացքինն հաստատած է ինք՝ Միքայէլ Միքայէլեանը:

Հայաստանի հաւաքականի առաջատարը տուգանուած է Խտալիոյ մէջ Դեկտեմբեր 31-ին կայացած Աշխարհի գաւաթի մրցումին ընթացքին: Միքայէլեան մեկնարկին դուրս գալու ժամանակ կաշուն ժապաւէնով փակած է մրցաշարի հովանաւորի անունը:

Դէպքին անդրադարձած է նաեւ Հայաստանի դահուկային մարզաձեւերու ֆետերացիոյ նախագահ Գագիկ Սարգիսեան:

«Միքայէլ Միքայէլեանը տուգանուած է միջազգային ֆետերացիոյ կողմէ: Ասիկայ որակագրկում է, այլ միայն տուգանք:

Միքայէլ Միքայէլեանը որոշած է փակել մրցաշարի հովանաւորի անունը իր մարզահագուստին վրայ, ինչ որ պատճառ դարձած է, որ տուգանուի դահուկային մարզաձեւերու միջազգային ֆետերացիոյ կողմէ», NEWS.am Sport-ի թղթակիցին հետ զրոյցին ըսած է Գագիկ Սարգիսեան:

«Կրասնոտարը» Կ'ուզէ Ձեռք Ձգել Նայիր Թիքնիզեանը

Ռուսիոյ ֆութպոլի ախոյեան «Կրասնոտարը» կը ցանկայ ձեռք ձգել Հայաստանի հաւաքականի եւ Պելկրատի «Յրվենա Զվեզտայի» 26-ամեայ եզրային պաշտպան Նայիր Թիքնիզեանը, կը հաղորդէ sport-express.ru-ն:

Յունուար 3-ին սերբական ակումբի գլխաւոր տնօրէն Զվեզտան Թերձիչը յայտնած էր, որ ռուսական ակումբներէն մէկը պատրաստ է Նայիր Թիքնիզեանի թրանսֆերի համար վճարել 5,5 միլիոն եւրօ:

Նայիր Թիքնիզեանը անցեալ ամրան Մոսկուայի «Լոքոմոթիվէն» տեղափոխուած է «Յրվենա Զվեզտա», որուն կազմին մէջ մասնակցած է 25 հանդիպման եւ կատարած՝ 2 կոլային փոխանցում:



«Ինթերը» Յաղթեց «Պոլոնիային»

Իտալիոյ առաջնութեան 18-րդ հանգրուանին փոխախոյեան «Ինթերը» Միլանի մէջ 3:1 արդիւնքով պարտութեան մատնեց «Պոլոնիան»:

«Ինթերի» կոլերը նշանակեցին լեհ կիսապաշտպան Փիոթր Զելինսքին, արգենտինացի յարձակող Լաուտարօ Մարթինէսը եւ ֆրանսացի յարձակող Մարքուս Թիւրամը:

Հայաստանի հաւաքականի նախկին աւագը, «Ինթերի» կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանը դաշտ մտաւ 67-րդ վայրկեանին:

«Ինթերը» 39 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, իսկ «Պոլոնիան» 26 կէտով 7-րդ դիրքին վրայ է:

Տիւէի եւ Տեմպելի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին ՊՍԺ-ին

Ֆրանսայի առաջնութեան 17-րդ հանգրուանին ախոյեան ՊՍԺ-ն տիր դաշտին վրայ 2:1 արդիւնքով յաղթեց «Փարիզին»:

ՊՍԺ-էն աչքի ինկան ֆրանսացի յարձակողներ Տեգիրէ Տիւէն եւ Ուսման Տեմպելէն:

ՊՍԺ-ն 39 կէտով երկրորդն է, իսկ «Փարիզը» 15-րդ դիրքին վրայ է՝ 16 կէտով:

Աչքի ինկան նաեւ իսպանացի պաշտպաններ Ռաուլ Ասենսիոն եւ Ֆրանսիսքօ Կարսիան:

«Ռէալը» 45 կէտով երկրորդն է եւ առաջատար «Պարսելոնայէն» ետ կը մնայ 4 կէտով: